ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան 08 ապրիլի 2021թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 5-ի թիվ 07-Լ և թիվ 08-Լ որոշումները և ղեկավարվելով 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ կայացել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) արտահերթ նիստ:

Կառավարման խորհրդի նիստին մասնակցել են.

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Գնել Հասրաթյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ:

Էլեկտրոնային քվեարկությամբ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Հաստատել օրակարգը և Կառավարման խորհրդի կողմից ՀՀ Վարչապետին ներկայացնել առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Գնել Հասրաթյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ:

8 կողմ, 1դեմ

Խորհրդի դիտարկումները.

1. Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ **Պերճ Խաչատրյանը 2021 թվականի ապրիլի 6-ին** հաստատել է իր մասնակցությունը 2021 թվականի ապրիլի 8-ին կայանալիք հեռակա քվեարկության միջոցով անցկացվելիք նիստին, նշելով հետևյալը. «Հարգելի գործընկերներ

Հաստատում եմ մասնակցությունս 2021 թվականի ապրիլի 8-ին հրավիրված խորհրդի նիստին: Միաժամանակ, հաշվի առնելով, որ նիստն անցկացվելու է հեռակա քվեարկության միջոցով և խոհրդի անդամները հնարավորություն չունեն օրակարգում ներառված հարցի վերաբերյալ լրացուցիչ քննարկում իրականացնել, հարցեր տալ, պարզաբանումներ և բացատրություններ ստանալ, խնդրում եմ տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ: Մասնավորապես, նախընտրելի է ծանոթանալ որոշման ընդունման (տեսչական մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման) հիմնավորումներին, պատճառաբանություններին՝ քվեարկության միջոցով դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով:
Չնայած, որ հարցը վերաբերվում է վարչական պաշտոնում նշանակված անձի ազատմանը, համապատասխան հիմնավորումների առկայությունը հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ նմանատիպ հարցերի շուրջ խորհրդի, ինչպես նաև որոշում կայացնող հաջորդող մարմինների հայեցողականությունը բացարձակ բնույթ չի կրում և

սահմանափակված է անձի՝ աշխատանքից անհիմն ազատվելուց պաշտպանության սահմանադրական երաշխիքներով:»:

Պերճ Խաչատրյանը 2021 թվականի ապրիլի 6-ին դեմ է քվեարկել ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդի 08.04.2021թ. արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված հարցին և ներկայացրել է հետևյալ դիտարկումը.

Խորհրդի աշխատակարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետի և 39-րդ կետի կարգավորումների ներքո ստորև ներկայացրել է քննարկվող հարցի վերաբերյալ հետևյալ հատուկ կարծիքը.

Օրակարգի հարցի վերաբերյալ տրամադրված հիմնավորումները, նյութերը և տեղեկատվությունը, ըստ էության, հանդիսանում են ոչ այնքան Տեսչական մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման հիմքերի ներկայացում, որքան ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Տեսչական մարմնի միջև առկա տարակարծությունների և հակասությունների վերհանում:

Միաժամանակ, հաշվի առնելով Տեսչական մարմնի՝ Կառավարությանը ենթակա և Շրջակա միջավայրի նախարարությունից անկախ պետական մարմին լինելու հանգամանքը, անընդունելի են Շրջակա միջավայրի նախարարության կողմից տեսչական մարմնին որպես իր ենթակայության կառույց դիտարկելը և վերահսկողության փորձեր կատարելը: Ի վերջո, Հայաստանի Հանրապետությունում տեսչական բարեփոխումների անկյունաքարային սկզբունքներից մեկը կայացել է նաև նրանում, որ ոլորտի վերահսկողություն իրականացնող կառույցը չգտնվի ոլորտի քաղաքականություն մշակող կառույցի կազմում կամ դրա վերահսկողության ներքո: Այդ իսկ պատճառով ընտրվել է համապատասխան կառավարման խորհուրդների միջոցով տեսչական մարմինների գործունեության վերահսկողության մոդելը:
ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Այս սահամանդրական նորմն ունի չափազանց լայն իրավական բովանդակություն և կոչված է պաշտպանելու ոչ միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը, այլ նաև ամրագրելու յուրաքանչյուր պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակից դուրս գալու անթույլատրելիությունը, ապահովելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունը:
Այսինքն՝ տեսչական մարմնի գործունեության կառավարման, համակարգման և վերահսկման գործառույթներով օժտված են բացառապես ուղղակիորեն այդպիսի լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք և մարմինները, իսկ շրջակա միջավայրի և ընդերքօգտագործման ոլորտի լիազոր մարմինների ղեկավարները այդ գործառույթների իրականացմանը մասնակցում են բացառապես որպես տեսչական մարմնի խորհրդի անդամներ: Իսկ տեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովման համար ոլորտային քաղաքականություն մշակող մարմինները օրենքով սահմանված գործառույթներ չունեն:
Քննարկվող հարաբերությունների շրջանակներում կարևորվում է նաև պատասխանատվության համաչափության սկզբունքը: Եթե ընդունենք, որ տեսչական մարմնի ղեկավարի կողմից թույլ են տրվել որոշակի թերացումներ կամ խախտումներ, ապա դրանց համար կիրառվող պատասխանատվության միջոցը պետք է համաչափ լինի

կատարված խախտմանը: Տվյալ պարագայում հարցը պետք է ներկայացվեր տեսչական մարմնի կառավարման խորհրդին համապարփակ կերպով, բոլոր կողմերի դիրքորոշումներով հանդերձ, համապատասխան գնահատական տալու և անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների շրջանակներում կարգապահական ներգործության միջոցներ կիրառելու համար: Այլ ոչ թե միանգամից, որպես «հրատապ լուծում պահանջող հարց», ներկայացվեր խորհրդի անդամների հեռակա քվեարկությանը:

Ընդգծել է նաև խորհրդի սույն նիստի կազմակերպման և անցկացման ընթացքում խորհրդի կանոնակարգի պահանջների խախտումները: Մասնավորապես,

- Ø Կանոնակարգի 19-րդ կետի համաձայն՝ հրատապ լուծում պահանջող հարցերի դեպքում խորհրդի նախագահի կամ անդամների 1/3-ի առաջարկով կարող են խորհրդի որոշումներն ընդունվել հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով՝ օրակարգային փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով խորհրդի անդամներին առաքելով: Տվյալ պարագայում որևէ կերպ հիմնավորված չէ օրակարգի հարցի լուծման հրատապությունը, առավել ևս այն պայմաններում, երբ անհրաժեշտություն կար խորհրդի անդամներին հնարավորություն տալու ծանոթանալ մի շարք հանգամանքների:
- Ø Խորհրդի կանոնակարգի 30-րդ կետի համաձայն՝ խորհրդի նիստի օրակարգը և դրա հետ կապված նյութերը նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ, իսկ արտահերթ նիստերի հրավիրման դեպքում՝ առնվազն երկու աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստով կամ պատշաճ միջոցներով ուղարկվում են խորհրդի անդամներին և հրավիրված անձանց: Տվյալ պարագայում սահմանված ժամկետում խորհրդի անդամների տրամադրվել է միայն օրակարգ, իսկ դրա հետ կապված տեղեկատվությունը և նյութերը տրամադրվել են հենց նիստի օրը:

2. **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Գևորգ Բալումյանը 07"04"2021 թվականին** մասնակցելով Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությանը մեջբերել է. «Հարգելի գործընկերներ

Հաստատում եմ մասնակցությունս 2021 թվականի ապրիլի 8-ին հրավիրված խորհրդի նիտին: Պաշտպանում եմ պարոն Խաչատրյանի առաջարկությունը:

Մեջբերում << հաշվի առնելով, որ նիստն անցկացվելու է հեռակա քվեարկության միջոցով և խոհրդի անդամները հնարավորություն չունեն օրակարգում ներառված հարցի վերաբերյալ լրացուցիչ քննարկում իրականացնել, հարցեր տալ, պարզաբանումներ և բացատրություններ ստանալ, խնդրում եմ տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ: Մասնավորապես, նախընտրելի է ծանոթանալ որոշման ընդունման (տեսչական մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման) հիմնավորումներին, պատճառաբանություններին՝ քվեարկության միջոցով դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով:

Չնայած, որ հարցը վերաբերում վարչական պաշտոնում նշանակված անձի ազատմանը, համապատասխան հիմնավորումների առկայությունը հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ նմանատիպ հարցերի շուրջ խորհրդի, ինչպես նաև որոշում կայացնող հաջորդող մարմինների հայեցողականությունը բացարձակ բնույթ չի կրում և սահմանափակված է անձի՝ աշխատանքից անհիմն ազատվելուց պաշտպանության

սահմանադրական երաշխիքներով:» մեջբերման ավարտ»: Խնդրում եմ տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն:»
08.04.2021 թվականին Գևորգ Բալումյանը 08.04.2021թվականի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված հարցին քվեարկել է «Կողմ»՝ ներկայացնելով քվեաթերթիկը:

3. ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը 08"04"2021 թվականին կողմ է քվեարկել Կառավարման խորհրդի օրակարգում ընդգրկված հարցին, միաժամանակ նշելով՝ «Առաջնորդվելով Կառավարման խորհրդի աշխատակարգի 8-րդ մասի 4-րդ կետով հայտնում եմ, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի հետ մեր աշխատանքային գործունեության ընթացքում արձանագրվել են և ձեռքբերումներ, և թերացումներ: Նախորդ տարիներ համեմատական գնահատականի արդյունքում ակնհայտ է, որ որոշ ուղղություններով առկա է դրական դինամիկա, իսկ առկա թերացումներից որոշները պայմանավորված են նաև 2020 թվականին տեղի ունեցած օբյեկտիվ իրողություններով: Տեսչական մարմնի գործունեության արդյունքները, ցուցանիշները համակարգում առկա խնդիրները և ձեռքբերումները բազմիցս քննարկվել են Կառավարման խորհրդի նիստերում, դրանք նաև հրապարակվել են 2020 թվականի տարեկան հաշվետվությունում: Հաշվի առնելով ոլորտային քաղաքականությունը մշակող Շրջակա միջավայրի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի բարձրացրած խնդիրները և դիրքորոշումը՝ օրակարգային հարցին «Կողմ» եմ քննարկում: Գտնում եմ, որ տՏեսչական մարմնի բնականոն գործունեության ապահովման համար հատկապես ոլորտային քաղաքականությունը մշակող մարմինների դիրքորոշումը անկյունաքարային է:»:

4. Շրջակա միջավայրի նախարար, Կառավարման խորհրդի նախագահ Ռոմանոս Պետրոսյանը 2021 թվականի ապրիլի 8-ի Կառավարման խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ հիմնավորումը ներկայացրել է հեռակա քվեարկության օրը՝ ժամը 15. 54 րոպեին, հետևյալ դիտարկմամբ.

«Հարկ եմ համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնից ազատման հարցը քվեարկության առարկա է դարձել՝ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, 18-րդ, 19-րդ կետերը:
Նման առաջարկը մեծապես կապված է խորհրդրի վերջին արտահերթ նիստի արդյունքների հետ, քանի որ խորհրդի արտահերթ նիստի օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերով նախատեսված էր քննարկում տեսչական մարմնի վերջին շրջանի գործունեության արդյունավետության և խորհրդի նախագահի ու անդամների կողմից բարձրաձայնված խնդիրների վերաբերյալ:
Առաջարկը պայմանավորված էր նաև որպես լիազոր մարմին Շրջակա միջավայրի նախարարության կողմից տարբեր խնդիրներ վեր հանած շուրջ 2 տասնյակ գրություններն անպատասխան թողնելու մտահոգությանը ոչ պատշաճ և ինստիտուցիոնալ աշխատակարգի կոպիտ խախտումներով արձագանքով, որը փաստող գրությունը կից ներկայացնում եմ:

Կառավարման խորհրդի վերջին արտահերթ նիստի ընթացքում քննարկված կարևոր բնապահպանական խնդիրների՝ Արաքսի ավազանից ավազի ապօրինի անվերահսկելի արդյունահանման, սիգի փորձարարական ձկնորսության երկրորդ փորձաշրջանի նախապատրաստական աշխատանքների և այլնի շուրջ ձեռնարկված միջոցառումներին ու ընթացիկ գործընթացներին չտիրապետելն ու նախաձեռնողականություն չդրսևորելը ևս մեկ ապացույց է տեսչական մարմնի ղեկավարի գործունեության ոչ կոմպետենտության:»:

5.Տեսչական մարմնի ղեկավար Գնել Հասրաթյանը ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ խորհրդակցական ձայնի իրավունքով Կառավարման խորհրդի նիստերին մասնակցելը, 06.04.2021 թվականին Կառավարման խորհրդի անդամների ներկայացրել է հետևյալ դիրքորոշումը"

«Խորհրդի հարգելի անդամներ,

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2021 թվականի ապրիլի 5-ի թիվ 07-Լ որոշմամբ քվեարկության դրված Տեուչական մարմնի ղեկավար Գնել Հասրաթյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ՝ ՀՀ վարչապետին առաջարկություն ներկայացնելու հարցի առնչությամբ, հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ (Տեսչական մարմնի ղեկավարը Խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով) հայտնում եմ հետևյալը.

ՀՀ վարչապետի 2020 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1028-Ա որոշմամբ նշանակվելով Տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում, պաշտոնավարմանս ողջ ընթացքում իմ իրավասության սահմաններում, օրենդրությամբ սահմանված կարգով պատշաճ ձևով իրականացրել եմ Տեսչական մարմնի առջև դրված խնդիրները, մասնավորապես՝

2021 թվականի փետրվարի 2-ին Խորհուրդի թիվ 03-Լ որոշմամբ հավանության է արժանացրել Տեսչական մարմնի ներկայացրած 2020 թվականի տարեկան հաշվետվությունը, համաձայն որի Տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքները՝ հաշվի առած համաճարակային և ռազմական դրության սահմանափակումները ու խոչնդոտները, եղել են ավելի արդյունավետ՝ 2018 և 2019 թվականների համեմատ: Ակնառու են հաշվետվության մեջ ներկայացված հետևյալ մի շարք աշխատանքները՝

Վերահսկողության շրջանակներում միայն Արցախյան 44-օրյա պատերազմի դադարից հետո իրականացվել են ստուգումներ թվով 10 ընկերություններում, որոնք ունեն ընդերքօգտագործման նպատակով տրամադրված շահագործման և ուսումնասիրության թույլտվություններ: Ստուգման ամփոփման արդյունքում թվով 4 ընկերությունների ստուգման արդյունքները տրամադրվել են ՀՀ գլխավոր դատախազությանը՝ պետությանը պատճառած վնասի վերաբերյալ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Տեղեկացնեմ նաև, որ ընդերքի վերահսկողության բնագավառում բավականին աշխատանքներ են իրականացվել՝ իրավապահ համակարգի պաշտոնատար անձանց կողմից քրեական գործերի շրջանակներում ընդունված համապատասխան իրավական ակտի հիման վրա, տեղանքներում կատարվել են չափագրման աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև՝ վերլուծություններ: Կապված Արաքս գետի ավազանում

ընդերքօգտագործում իրականացնողների հետ, հարկ եմ համարում տեղեկացնել, որ չնայած Տեսչական մարմնում ոլորտի մասնագետների քանակի խիստ անբավավար լինելուն, իրականացվել է չափագրման աշխատանքներ շուրջ 40 կմ Գետաշեն-Եղեգնավան համայնքների հատվածում, 16 ընդերքօգտագործողների մոտ և իրենց սահմաններից դուրս նշված հատվածում՝ իրականացված արդյունահանումների մասով, որոնց ամփոփման արդյունքում նույնպես առկա են իրավախախտումներ: Վերջինս արձանագրվել է և սահմանված կարգով նույնպես կտրամադրվի ՀՀ գլխավոր դատախազությանը՝ պետությանը պատճառված վնասի մասով հետագա ընթացքն ապահովելու համար:

ՀՀ Արարատի մարզում արագիլների աղտոտվածության պատճառի բացահայտում և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում ապօրինի ձկնորսության ու պահեստավորված 127 տոննա Սիգ ձկնատեսակի հայտնաբերում և առգրավում, ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի թիվ 100-Ն որոշման հեղինակ, որի ընդունման արդյունքում հաստատվել են Տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագիրը և ձևը, պետական տեսուչի համազգեստը կրելու կարգն ու պայմանները, մշակվել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոսպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի բնապահպանական մոնիտորինգ իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» որոշման նախագիծը և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ,...:

Մեջբերեմ նաև այն փաստը, որ ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ նրան հաջորդող ամիսներին Տեսչական մարմինն իր հիմնական գործառույթներից զատ կամավորական սկզբունքով կատարել է մի շարք աշխատանքներ, այդ թվում՝

Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում, հարակից գյուղերում հերթափոխի կազմակերպում, պատերազմի ընթացքում զոհվածների դիերի տեղափոխում, ամենօրյա ռեժիմով բժշկների տեղափոխում Երևանից Մեծամորի դիահերձարան, Արցախի Հանրապետության բնակավայրերի ապաստարաններում և թաքստոցներում գտնվող քաղաքացիական անձանց սննդով, դեղորայքով և տնտեսական այլ անրաժեշտ պարագաների մատակարարում, ինչպես նաև իրականացրել է շուրջօրյա հերթապահություն՝ Տեսչական մարմնի և տարածքային ստորաբաժանումների վարչական շենքերում:

Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքին, որ Խորհրդի նախագահի կողմից առաջարկված օրակարգի հարցի վերաբերյալ որևէ հիմնավորում ներկայացված չէ, ինչից կարելի է ենթադրել, որ նշյալ որոշումը կրում է անձնավորված և կամայական բնույթ:»:

Նույն սկզբունքով Գնել Հասրաթյանը կառավարման խորհրդի անդամներին է դիմել 08.04.2021 թվականին, մասնավորապես նշելով"

- Կառավարման խորհրդի նախագահի կողմից ներկայացված հիմնավորումների՝ Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատելու հարցի վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը.

Այն հանգամանքը, որ Խորհրդի նախագահը Տեսչական մարմնի ղեկավարի ազատման հիմնավորումները ներկայացնում է Խորհրդի հեռակա քվեարկության վերջին ժամերին, արդեն իսկ Խորհրդի գործունեության հանդեպ անարգանք է, ինչից կարելի է ենթադրել, որ իրավիճակը կրում է արհեստածին անձնավորված և կամայական բնույթ:

Անդրադառնալով Խորհրդի նախագահի կողմից բարձրացված այն հարցին, թե Շրջակա միջավայրի նախարարության կողմից տարբեր խնդիրներ վեր հանած շուրջ 2 տասնյակ գրություններ, որոնք ուղղված են եղել Տեսչական մարմնին՝ մնացել են անպատասխան կամ արձագանքվել են ինստիտուցիոնալ աշխատակարգի կոպիտ խախտումներով, նշեմ, որ Տեսչական մարմինը արդեն իսկ հիմնավորված պատասխանել է Շրջակա միջավայրի նախարարությանը, մասնավորապես՝ հատիկ-հատիկ նշելով յուրաքանչյուր գործի մասով առանձին-առանձին: Նշյալ դիտարկումները և հիմնավորումները ներկայացված Տեսչական մարմնի կողմից, վառ ապացույցն են նրա, որ Տեսչական մարմինը տիրապետում է ոլորտի խնդիրներին՝ Օրենքի տառին համապատասխան:

Տեսչական մարմնի ղեկավարը տեղեկացրեց նաև բոլորիդ, որ Խորհրդի նախագահի կողմից բարձրացված՝ Խորհրդի վերջին արտահերթ նիստի ընթացքում քննարկված կարևոր բնապահպանական խնդիրների՝ Արաքսի ավազանից ավազի ապօրինի անվերահսկելի արդյունահանման, սիգի փորձարարական ձկնորսության երկրորդ փորձաշրջանի նախապատրաստական աշխատանքների և այլնի շուրջ ձեռնարկված միջոցառումներին ու ընթացիկ գործընթացներին՝ որպես Տեսչական մարմնի ղեկավար, տիրապետում է լիարժեք և հարցերի կարգավորման համար դրսևորել է նախաձեռնողականություն....

Գնել Հասրաթյանը վերջում շնորհակալություն է հայտնել Կառավարման խորհրդի բոլոր անդամներին՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ ներկայացրած կարծիքի համար և նշել, որ այն լրիվ աջակցում է ոլորտին տիրապետող նախարարի դիքորոշմանը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ) _____ Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան